վում էր և հարևան Բարգուշատ և Բաղաբյուրտ մահալներում, թեև որպես դեռ շատ դանդաղ դրսևորվող պրոցես։ Այդ ներգաղթը ավելացնում էր թուրք տարրի տեսակարար կշիռը երկրի բնակչության մեջ, միաժամանակ մեծացնում էր դեռ հաստատաբնակ կենցաղին չանցած ազգաբնակության թիվը։ Այսպես՝ Փիսիան, Զավնդուր և Բաղաբյուրտ մահալներում ձմեռանոցների՝ ղշլաղների թիվը հասնում էր 35-ի, այսինքն ամբողջ գավառում եղած այդ կարգի 65 բնակավայրերի կեսին. մյուս կեսը զետեղված էր Սիսիանի և Տաթևի մահալների Եռաբլուր (Ուչթափալար) սարահարթի և կից Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի լանջերին, առավելապես Ղասում-բեկի ընտանիքի անդամներին պատկանող հողերի վրա, որտեղ կային միայն այդ ընտանիքի հետ կապված 26 ձմեռանոցներ։ Թուրքական տարրը գերազանցորեն ձմեռանոցներումն էր զետեղված և խմբված էր իր ցեղապետների՝ բեկերի շուրջը, որոնց անունով հաճախակի կոչվում էին ռուսական անմիջական կառավարության հաստատման միջոցին Սիսիանի աջափնյա, Տաթևի ավելի հարթավայր տարածությունները և Կյուպարայի ու Աճանան-Թուրք մահալները, այսինքն՝ Բարգուշատի լեռնաբազուկին անմիջապես կպած շրջանները։ Հարավային ավերված, ամայացած գոտուն (զոնային) համապատասխանում էր հյուսիսում մի այլ նման գոտի սկսած Սիսիանի (Բիչանաղի) լեռնանցքից մինչև Գորիսի հովիտը։ Այստեղ շրջանը բազմամարդացնելու նպատակով շատ ճիգ էր թափել կապիտան Հաջի-Աղալար-բեկը դեռ Մեհտի-Ղուլի խանության օրով՝ դուրս բերելով բնակիչներ Զանգեզուրի լեռնաշղթայի արևմուտքից, գլխավորապես Նախիջևանի և մասամբ Երևանի խանություններից, որոնք դեռևս մնում էին պարսկական պետության հովանավորության տակ։ Նա աշխատում էր թե վերադարձնել այս կողմերից վերջին տարիները հեռացած թուրք գյուղացիներին և թե բերել նոր գաղթականներ, մանավանդ Նախիջևանից և Երևանի խանության Շարուր գավառից, որտեղ առանձնապես զարգացած էր բրնձաբուծությունը։ Նրա այս գործունեությունն է, որ առանձնապես խրախուսվում էր ռուսական կառավարության կողմից, ինչպես և նույն քաղաքականությանը հետևող Սիսիանի մելիք Թանգունը, որը երկու կամուրջ էր կառուցել Որոտան (Բաղարչայ) գետի վրա և մի քարվանսարա Սարվարդ լեռան տակ Սիսիանի (Բիչանաղի) լեռնանցքի մոտ։ Թվում է, թե դրա համար է, որ գեներալ Կոտլյարևսկին միջնորդել էր Մեհտի-Ղուլի-խանի առջև Հաջի-Աղալար-բեկին նոր կալվածքների նվիրմամբ պարգևատրելու։ Այդ վերաբնակեցումը բացի այն, որ թուլացնում էր Նախիջևանի և Երևանի խաներին տնտեսապես, նաև ստեղծում էր վստահելի հենարաններ ռուսական զորքերի առաջխաղացման համար Զանգեզուրից դեպի Արարատյան դաշտը[10]։

[10] Հետաքրքրական է, որ այս Հաջի-Աղալար-բեկը չհրաժարվելով իրեն նվիրված կամ հորից ժառանգություն ստացած հողերից և գյուղերից, հենց որ սկսեց գործել Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի մասնաժողովը, հայտարարեց, որ ինքը հոժարությամբ հրաժարվում է այս տուրքերից, մանավանդ ֆալանքարլրդից, որ ստանում էր Սիսիանից և այլ մահալներից, «նախատեսելով, որ ռուսական կառավարության օրով, որը ուժ և ամեն հնարավորություն ունի Ղարաբաղի բնակիչներին թշնամական հարձակումներից պաշտպանելու, այս մահալը, որը մի ժամանակ 2 000 ծուխ բնակիչ է ունեցել, կարող է կրկին իր նախկին ծաղկյալ վիճակը վերականգնել արտասահմանից հին բնակիչներին վերադարձնելով և պետությանը մեծ օգուտներ տալ»։ Երևի նա լավ հասկանում էր, որ Ղարաբաղի պրովինցիայում թույլ չի տրվի մասնավոր մարդկանց հավաքել իրենց օգտին և սեփականել պետական եկամուտները և ավելի խոհեմություն էր համարել հոժարակամ անել այն, ինչ որ բոլոր ուրիշ վերացված (Շիրվանի և Շաքիի) խանություններում ռուսական կառավարության հարկադրանքով էր կատարվում։